

Խաչն պատարագին վեր աջ թևին»:

Լէչն կլորեց գնաց ինկաւ մէջ ձորին:

123. Էն օր եօթն օր թըմմեր էր: Տաւիթ ինան (և) ուր խօրօխպէր տէսան, որ մէկ ձիաւոր մը մէջ էրկինք մէջ կէտին է, էկաւ մաաւ մէջ խեծլի ճանտկներուն՝ Տաւիթ լէշ կիտաւի: Չիաւորի աչքն ինկաւ Քարէկալի էրկան մարդն, ձին քչեց տեխ էնտեխ. որ խա- սաւ, իրար ճանչցան: Տաւիթ Խանդիւթ խանըմին աչքով արեց, էկաւ խօրօխպօր ձեռք պագեց: Չէնով Յովան Տաւիթից էմացաւ, որ ուր նշանլուն էր, էլաւ տեխ Սանտուն գնաց: Տաւիթ ինան ուր նշանլուն էլ տեխ Կապոս Կող գնացին:

124. Խանդիւթ ուր խպառ տութէնէն ձին շանձ Տաւիթ առաջ քշեց: Ինոր խամար Տաւիթ ինաս արաց, առաձաւ տեխ Սա- սուն. աղջիկն որ իմացաւ, ձիուց իջաւ ուր արիշըմէ թաթեր՝ խանեց, քէօրիկ ոտքով ավեց մէջ խերկին, վազեց, պօռաց Տաւ- թին. «Քըոյ Ասածու սիրուն էլնի, մէկ մը էլ իրիշիկ տեխ իտե- լանց»: Տաւիթ տարձաւ աէսաւ, որ աղջկան ոտքեր խերկի կռէթներէն² ըսկում ճղճղվեր է, որ արուն էլե խերկ ծածկէ: Տաւիթի սիրտ իջաւ, Խանդիւթ խանըմը իթող իաւանց, ինքն ինկաւ առաջ, չուժ խասան Կապոս Կողը:

125. Թագաւոր էլաւ ինոնց ախմաց, տարաւ ուր սարէն իջե- ցուց, կանչեց վարդապետներ, քեախանէք. եօթն օր եօթ գե- շեր խարսնիս արին, Տաւիթ պոսակեցին վեր Խանդիւթ խանըմին:

ԺԲ.

126. Ինն ամիս, ինն օր, ին սըճաթ որ ժամանակ ընցաւ, Տաւ- թին աղե մը էլաւ՝ անուն տրեց Մճէր: Քառասունը տէլ չէր լը- մընցէ, Տաւիթ մտաւ էօտէն, աէսաւ որ Մճէր քներ է, ամայ նա- Ֆաս խանած ժամանակին իրեսի վերվի⁵ շոր չէլնի իջնի: Շուֆայի գնաց⁴, թէ աղէն ուր մէջքի պտուղ չի: Խանդիւթ խանըմին ա- սաց. «Իմ աղէկութնի ժամանակ՝ երբ որ ես նաֆաս կառնի կու- տի, իմ իրեսի շոր չուժ էօտի կամար կեւնէր կիջնէր: Էսայ աղէն իմ մօտից չի, որ ըսկնայ թըոլ է»: Խանդիւթ խանըմ ասաց. «Հալայ կաց չուժ քառասունըէն էլնի, սորա արի սէյր արա»: Քառ-

1 Մետարուէ գուլպաներ, 2 Հողակրշտ: 3 Վերայի 4 Շուֆայի գնալ, շուֆայ տանել—կասկածել, հասկանալ: 5 Վերայի